4· «Հռոմները վերադարձնում են պարսիկներին երկու բերդերը(!) Փառանդիոն եւ Բոլոն»:

5· Ճորոխի ձորը «չուրջ երեք օրուան ճամբայ հարկատու է հռոմներին, սակայն, նրանից անդին սկսւում է Պարսկահայքի երկիրը(!) եւ այս տեղումն է ոսկու հանքը, որ Կաւատի հրամանով մշակում է Սիմէոն անուն հայը···սա հռոմներին յանձնեց իրեն եւ Փառանդիոն, բայց մերժեց յանձնել հանքի ոսկին»:

6· Վոհ կամ Ճորոխ «բղխում է Ծանի երկրից՝ շատ մօտիկ(!) այն հայերի միջից, որոնք բնակում են Փառանդիոնի չուրջը»:

Թողնենք առայժմ անճշդութիւնները, որ սպրտած են այս կէտերի մէջ շնորհիւ պ· Խաչատրեանի անփութութեան: Բաւականանք անգամ նրանով, ինչ որ ինքն է առաջարկում: Տեսէք, ի՞նչ հետեւութիւններ է հանում պատմիչի վկայութիւններից:

«Արդ՝ այս տեղեկութիւններից նախ հետեւում է, դատում է պ· Խաչատրեան, թէ ոսկու հանքերը գտնւում էին սահմանի վրայ Փառանդիոն եւ Բոլոն բերդերին շատ մօտ մի տեղում· երկրորդ՝ այս բերդերը մօտ էին Թէոդոսիուպոլսի կամ Կարինի սահմանին· երրորդ՝ Ճորոխը բխում է Փառանդիոն բերդին(!) մօտակայ մի տեղից»:

Աննեբելի է մի բանասէրի, մանաւանդ, երբ քննադատի դերում է, այսպիսի արտասովոր անփութութիւն, որով պ· Խաչատրեան մեղանչում է իր իսկ բերած «մանրամասնութիւնների» դէմ:

Ոսկու հանքը գտնւում է միմիայն Փառանգիոնում, ինչպէս վկայում են պ· Խաչատրեանի բերած առաջին եւ հինգերորդ կէտերից· Բոլոնի մասին խօսք չկայ:

Թէոդոսիուպոլսի սահմանին մօտ է միմիայն Բոլոն, որպէս վկայում է երկրորդ կէտը, եւ ոչ թէ երկու բերդերը:

Ճորոխը բղխում է Փառանդիոնի մօտակայ տեղից, ինչպէս կարելի է տեսնել հինգերորդ եւ վեցերորդ կէտերից, եւ ոչ թէ Փառանդիոն բերդի մօտակայ տեղից: Եւ ընդհանրապէս Փարանդիոն բերդ է անուանուած անգլիական թարգմանութեան մէջ սխալմամբ միայն առաջին կէտում, միւս տեղերում երբեք Փարանդիոն չէ անուանուած բերդ, ինչպէս անում է պ· Խաչատրեան:

Այս տխուր համեմատութիւնից մի բան է հետեւում, որ յարգելի բանասէրը բանասիրական աչք չունի եւ, եթէ ունի, կանխակալ մի կարծիք կուրացրել է նրան: Շփոթելով երկու միմեանցից հեռու ընկած վայրերը, միացնելով մէկ միւսի հետ, կապելով մէկի տեղագրութիւնը միւսին, պ· Խաչատրեան ստեղծում է մի աշխարհագրական երկւորեակ եւ սար ու ձոր ընկնում որոնելու նրա տեղը: Եւ զարմանալին այն է, որ կարծում է թէ յաջողել է գտնել, եւ ո՞ւր — Թորթումի հովտում: Նախապէս ցուցադրում է իր տեղագրական գիտութիւնը, որովհետեւ երկիրը տեսել է եւ հռչակաւոր Սրտաձորից շատ անգամ բարձրացել է Կուչկուչար սարի գագաթը եւ յափշտակիչ ոմայլումով դիտել հմայիչ եւ վեհաշուք համայնատեսլարանը:

Նայինք, ի՞նչ նոր բան է ասում, որ յայտնի չէր:

Առաջ հարկաւոր է տեսնում ճշդել Հայաստանի հռոմ–պարսիկ սահմանագիծը·—

«Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, ասենք, թէ Կարին եւ Շաղագոմ հռոմներին էին, իսկ Բասեն եւ Ոքազ՝ պարսիկներին: Սրանց միջեւ բնական սահմանագիծն են կազմում, որուն հետեւում էր եւ քաղաքականը, նոր անուններով — արեւելքից Բասեն գետի եւ Եփրատի ջրաբաշխ՝ Դեվէ–Բոյուն–Քիրեջլի–Ղարդաբաղար կամ Զորան–Դեղէ լեռնային կատարները: Կարինի հիւսիսից Թորթում վտակի եւ Եփրատի մի կողմից, իսկ միւս կողմից՝ առաջնի եւ վերին Ճորոխի ջրաբաշխ լեռները: Ղարդաբաղարի հիւսիս–արեւմտեան ծայրը··· Կուչ–կուչար գագաթն է, որի հիւսիսից երկարում է մի թեւ կապելու համար այս լեռնակոյտը ուրիշ մի մեծ լեռնաշարքի՝ Զիարեթ–Ղազանբաշի եւայլն, որոնք աղեղնաձեւ գատում են Թորթում գետի աւազանը Եփրատի եւ Ճորոխի աւազանից··· Այս պատնիշաձեւ լեռնաշղթայի կատարներից ուրեմն անցնում էր հռոմ–պարսիկ սահմանագիծը եւ Ճորոխի ձորը հաւանօրէն մինչեւ Օլթի գետի բերանը հռոմներին էր պատկանում: Պատ-